ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2017թ. մարտի 17 -ին **N 30 -Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<ա>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով *որոշում եմ*՝

1. Հայաստանի Հանարապետության Արագածոտնի մարզպետի 2007 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 51-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) ուժը կորցրած ճանաչել <<ժ)>> և <<ժա)>> ենթակետերը,

2)<<ժբ>> և <<ժգ)>> ենթակետերից հանել «և քաղաքացիական ծառայողների ատեստավորման» բառերը,

3) <<ժդ)>> ենթակետից հանել «և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման» և «և ատեստավորման» բառերը:

Գ.ԳՅՈՉԱԼՅԱՆ